

բանասիրական

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Առ Աստղն Հիւսիսոյ :

Ուրջ եւ տըխուր գիշերայնոյն
Օուարթաձաճանչ վառին հըրատք .
Ի մութ գընտին՝ ցըդարձ նորուն
Դ'եմին փառօք լուսոյ ջոկատք .
Իւրաքանչիւր գայ յուշիկ
Յաստղապահակն իւր լըռիկ ,
Պատի զերկնիւք շուրջակայ
Եւ անդրէն յետըս դառնայ :

Ունի եւ տիւ հանգոյն նոցին
Խստեղս ի զարդ իշխանութեան ,
Ուք ի կապոյտ դաշտս հեռագին
Խնտեսք՝ ընդ հուր շաւեղն երթան .
Յոյլ եւ պայծառ յուղարկուք՝
Ո՞ինչ երիկուն աճէ շուք
Պատմեն քանի գունդ շողուն
Շագեն ծածկին զոյգք նորուն :

Խակ դու զնոց՝ աստղըդ բեւեռին
Դիտես ծագումն եւ մուտս ի մայր .
Դու միայնակ յերկնիդ ցըրտին
Խնշարժ պահնակ կաս ի հին վայր .
Ինդ կաքաւիչ նոցայն պար
Դու ըշարժես գարշապար ,
Եւ ոչ մըխես ծոց կուսան
Յարեւմըտիցն ովկիան :

Ի տալ տուընջեան ծայր ծիրանի
Խնտուստ հայիս հեզ՝ յօդ կարմիր ,
Եւ երեկոյ մինչ զօր տանի
Դրտանէ զքեզ ի նոյն քոյ դիր .
Ի՞նդ՝ ելք ալեաց միջօրեայն ,
Ի՞նդ՝ դիտէ զքեզ եւ ժամն այն
Ու զհիւսիսին կոչէ զբոց
Յանցել զերկնից կապոյտ ծոց :

Ո զգործ իւրեանց լոյս եւ խաւար
Ի՞նդ ակնարկեաւ քով կատարեն .
Ուըխեն քաղաքք յօդս աստղավար ,
Ո՞ւըուըք մարտից զարեւ սքօղեն .

Գիշերային փոթորիկ
Գոռուայ նդ բըլուրս պարառիկ .
Հողմ ցերեկի ալէկոծ
Խառնէ զկոչակս ընդ ամպոց :

Հէգ նաւուղիղ կարկնակորոյս
Յանայլայլակ շող քոց դիմաց
Լառուցեալ զաշ յաներկբայ լոյս
Յափունս ծանօթ ուղղէ զընթաց .

Եւ որք յահեղն ամային
Ղզգիշերայն աստանդին ,
Մտես լուսոյդ ըսփոփեալ
Օմոլարն իւրեանց ուղղեն քայլ :

Ա ասն այնորիկ եւ քերդողք հին ,
Ղզգօնք , մոնազք խոր անտառաց ,
Ճառագայթ քո դիտէին
Ղզտիպ ըլքնաղ բարւոյն անանց ,
Ղյն՝ յոյր Ճաճանչ անմըթար
Յաւիտէնիցն ի լամբար
Ճամանակին ուղեւոր
Օընթացսն ուղղէ զգուշաւոր :

ՊՐԱՅԻՆԴ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուրդովիկոս ԺԶին վարքն ու մահը :
(Տես երես 268) :

Երկրորդ օրը , ամսուն 12^{րդ} , թագաւորը հարցուց առջի տեսած պահապանին՝ թէ արդեօք հրաման մը եկամ իր ընտանիքը տեսնալու խնդրոյն վրայօք . անիկայ պատասխանեց՝ որ “ Դեռ հրամանի կը սպասենք , ” : Ղն ատեն աղաւեց թագաւորը նոյն պահապանին , որ իշխանու հեաց և թագաժառանգին ինչ պէս ըլլալն իմանայ ու վերջը իրեն իմացընէ , և անոնց ալ ըսէ որ նաև ինքը աղէկ է : Պահապանը երբոր դարձաւ , ապահովցուց զթագաւորը որ ամէնն ալ ողջ առողջ էին : Ժագաւորը հրամայեց ինձի որ իր որդւոյն անկողինը վերը թագուհւոյն խուցը տանիմ . վասն զի նոյն գիշերը թագուհին իր խոտէ անկողինը թագաժառանգին տուեր էր որ պառկի . բայց աղաւեցի ես թագաւորին որ գոնէ ժողովքին որոշմանը սպասէ . ան ատեն